«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/305

«11» «09» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող պարոն Արաիկ Եսայանին
«Բիլդերս» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ալֆրեդ Մակարյանին
Հասցե՝ ք. Երևան, Գյուրջյան փ. 58/28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նպատակով 2024 թվականի ապրիլի 9-ին հրապարակված ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 ծածկագրով մրցույթի մասնակցության հայտ են ներկայացրել 4 (չորս) մասնակից՝ «Բիլդերս» ՍՊԸ, Կարեն Մանասյան ԱՁ, «Արամյաններ» ՍՊԸ, «Մոնարխ-7» ՍՊԸ:

2024 թվականի ապրիլի 19-ի N2 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Բիլդերս» ՍՊԸ-ն («Բիլդերս» ՍՊԸ -ի մասնակցության հայտը և N2 արձանագրության պատճենը կցվում են):

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «Բիլդերս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 13-ին կնքվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պետական գնման №ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որը վավերացվել է 2024 թվականի հունիսի 20-ի N1 Համաձայնագրով: Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի հուլիսի 10-ը, աշխատանքներն ավարտելու նպատակով 2024 թվականի հուլիսի 10-ին կնքվել է N2 Համաձայանագիրը, ըստ որի կատարման ժամկետը երկարաձգվել է ևս 20 օրացուցային օրով՝ վերջնաժամկետ սահմանելով 2024 թվականի հուլիսի 30-ը ներառյալ (Պայմանագիրը և Համաձայնագրերը կցվում են):

Աշխատանքները կատարվել են թերի, տեխնիկական բնութագրին ոչ համապատասխան, թերությունների շտկման համար համաձայն Պայմանագրի 3.1

2 կետի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է ևս 10 (տասը) օրացուցային օր, սակայն այն չի կատարվել:

Պատասխանատու ստորաբաժանման 28.08.2024 թ. Ակտ-արձանագրության և 02.09.2024թ զեկուզագրի (կցվում է) համաձայն Բիլդերս ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագիրը միակողմանկի լուծելու մասին: Ծանուցումը պատշաճ ուղարկվել է էլփոստի և փոստային առաքման միջոցով, ինչպես նաև հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում (կցվում է):

Միաժամանակ ծանուցմամբ «Բիլդերս» ՍՊԸ-ին առաջարկվել է մինչև 2024 թվականի սեպտեմբերի 6-ը ներառյալ վճարել տույժերը, որակավորման և պայմանագրի ապահովումները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գնումների բաժին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում չներառելու պայմանով:

«Բիլդերս» ՍՊԸ-ն՝ լինելով պատշաճ ծանուցված չի կատարել վճարումները և չի ներկայացրել կտրոնները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլդերս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ	00910116	Ք. Երևան, Գյուրջյան փ. 58/28	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	11.09.2024թ. ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11

Սույն որշման բնօրինակն ուղարկել ֆինանսների նախարարություն, պատճենը՝ «Բիլդերս» ՍՊԸ-ին:

Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

Հարգանքով՝

Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
094642033